Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի
2018 թ. օգոստոսի 31-ի N 146 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԽՐԻՄՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Խրիմյան թանգարանի տանիքի նորոգման, օդափոխության, օդորակման և հակասառեցման համակարգերի տեղադրման աշխատանքների իրականացումը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական բարեգործական ընդհանուր միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ՝ 04703401
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, եկեղեցաշինական
6.	Ծրագրի բյուջեն	84.572.630 դրամ՝ առանց ԱԱՀ-ի
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	28 դեկտեմբերի 2017 թ. – 28 դեկտեմբերի 2018 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Խրիմյան թանգարանի տանիքի նորոգման, օդափոխության, օդորակման և հակասառեցման համակարգերի տեղադրման աշխատանքները, որոնց գումարը կազմում է 84.572.630 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Աշխատանքների իրականացման գումարը կազմում է 61.851.120 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 22.721.510 դրամ արժողությամբ նյութերի և սարքավորումների ներմուծում: Աշխատանքներն իրականացվելու են «ՎԱԵԼԿՈՆ » ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Վ. Վաղարշյան 12, հարկ 7, ՀՎՀՀ՝ 02596346), պայմանագիրը կնքված է 28.12.2018 թ., 14Շ/ 017:
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Խրիմյան թանգարանի տանիքի նորոգման, օդափոխության, օդորակման և հակասառեցման համակարգերի տեղադրման աշխատանքները, որոնց ընդհանուր գումարը կազմում է 54.572.630 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Աշխատանքների իրականացման գումարը կազմում է 61.851.120 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 22.721.510 դրամ արժողությամբ նյութերի և սարքավորումների ներմուծում: Շինարարական աշխատանքներն իրականացվում են «ՎԱԵԼԿՈՆ» ՍՊԸ-ի կողմից:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Էջմիածնի քաղաքապետարանի հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական ու ֆինանսական բաժինների և Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ